**600.0020.06.10.00**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հոկտեմբերի 2000 թվականի №20
քաղ. Երևան

## 2000-2001թթ. ձմռան ժամանակաշրջանի կենտրոնացված ջեռուցման սակագների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 14-րդ, 36-րդ հոդվածներով և 20-րդ հոդվածի ա) կետով, ինչպես նաև ելնելով հանրապետությունում 2000-2001 թթ. ձմռան ժամանակաշրջանում ջեռուցման ապահովման անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել՝
   1.1. 2000-2001թթ. ձմռան ժամանակաշրջանի կենտրոնացված ջեռուցման սակագներն ըստ բնակավայրերի՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը՝

| N | Բնակավայրի անվանումը | Ջեռուցման տևողությունը (օր) | 2000/2001թթ. սակագները | |
|---|---|---|---|---|
| | | | Բնակչությանը 1 քմ բնակելի մակերեսի ջեռուցման համար (դր/քմ) | Այլ սպառողների ջեռուցման համար (դր/Գկալ) |
| 1 | Երևան | 90 | 1450 | 10696 |
| 2 | Գյումրի | 120 | 2628 | 10413 |
| 3 | Աբովյան | 90 | 1304 | 9165 |
| 4 | Հրազդան | 120 | 1518 | 9796 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Վեդի | 90 | 1339 | 10351 |
| 6 | Սևան ք. | 120 | 1645 | 8097 |
| 7 | Չարենցավան | 100 | 1327 | 8392 |
| 8 | Ջերմուկ | 120 | 1679 | 8466 |

1. 2 2000-2001թթ. ձմռան ժամանակաշրջանի համար «Հայգազարդ» ՊՓԲԸ-ի «Գյումրիջերմո» ջերմամատակարարման արտադրամասի կողմից ջեռուցման նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագինը՝ 8231 դրամ/Գկալ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Մինչ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում ջեռուցում իրականացնող ընկերություններին համապատասխան ջերմային էներգիայի արտադրման, փոխադրման և բաշխման գործունեության լիցենզիաների տրամադրումը, թույլատրել՝

ա) 2000-2001 թթ. ջեռուցման ժամանակաշրջանում ջերմային էներգիայի արտադրման, փոխադրման և բաշխման գործունեություն իրականացնել հետևյալ կազմակերպություններին.

- Երևանի քաղաքապետարանի «Ջերմային տնտեսություն» ՊՓԲԸ
- «Հայգազարդ» ՊՓԲԸ-ի «Գյումրի ջերմո» ջերմամատակարարման արտադրամաս
- «Աբովյանի համայնքային ջերմամատակարարում» ՓԲԸ
- Վեդու քաղաքային համայնքի «Արև» ՓԲԸ
- «Սևանի համայնքային ջերմամատակարարում» ՓԲԸ
- Չարենցավանի քաղաքապետարանի ջերմաարտադրական ձեռնարկություն
- Ջերմուկի քաղաքապետարանի ջերմաարտադրական վարչություն

բ) 2000-2001թթ. ջեռուցման ժամանակաշրջանում ջերմային էներգիայի բաշխման գործունեություն իրականացնել՝ Գյումրիի «Ջերմամատակարարում» ՓԲԸ-ին:

**ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի**
**նախագահ՝** **Վ.Մովսեսյան**